ԵՎՐԱՍԻԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

ԽՈՐՀՈՒՐԴ

ՈՐՈՇՈՒՄ

11 հուլիսի 2016 թվականի **թիվ 56** քաղ. Աստանա

«Անվավոր տրանսպորտային միջոցների անվտանգության մասին» Մաքսային միության տեխնիկական կանոնակարգում (ՄՄ ՏԿ 018/2011) փոփոխություններ կատարելու վերաբերյալ

«Եվրասիական տնտեսական միության մասին» 2014 թվականի մայիսի 29-ի պայմանագրի 52-րդ հոդվածին և Եվրասիական տնտեսական բարձրագույն խորհրդի 2014 թվականի դեկտեմբերի 23-ի թիվ 98 որոշմամբ հաստատված՝ Եվրասիական տնտեսական հանձնաժողովի աշխատանքի կանոնակարգի 1-ին հավելվածի 29-րդ կետին համապատասխան՝ Եվրասիական տնտեսական հանձնաժողովի խորհուրդը **որոշեց.**

1. Մաքսային միության հանձնաժողովի 2011 թվականի դեկտեմբերի 9-ի թիվ 877 որոշմամբ ընդունված՝ «Անվավոր տրանսպորտային միջոցների անվտանգության մասին» Մաքսային միության տեխնիկական կանոնակարգի մեջ (ՄՄ ՏԿ 018/2011) կատարել հետևյալ փոփոխությունները՝

ա) նշված տեխնիկական կանոնակարգի 3-րդ հավելվածի 15-րդ կետի 15.1 ենթակետը շարադրել հետեւյալ խմբագրությամբ՝

«15.1. Եվրասիական տնտեսական միության տարածքում շրջանառության մեջ դրվող տրանսպորտային միջոցները, որոնք նախատեսված են սահմանափակ ֆիզիկական հնարավորություններով անձանց համար, ունեն արգելակների հակաբլոկավորման համակարգ եւ կառավարման հարմարեցված օրգաններ։».

ա) նշված տեխնիկական կանոնակարգի 9-րդ հավելվածի 10-րդ կետում 10.1 ենթակետը շարադրել հետեւյալ խմբագրությամբ՝

«10.1. Կատարվում են սույն Տեխնիկական կանոնակարգի 3-րդ հավելվածի 15-րդ կետի 15.2 - 15.7 ենթակետերի պահանջները։ Թույլատրվում է շահագործման մեջ գտնվող՝ արգելակների հակաբլոկավորման համակարգով չսարքավորված տրանսպորտային միջոցների վերասարքավորումը։»։

2. Սույն Որոշումն ուժի մեջ է մտնում դրա պաշտոնական հրապարակման օրվանից 10 օրացուցային օրը լրանալուց հետո։

Եվրասիական տնտեսական հանձնաժողովի խորհրդի անդամներ՝

Հայաստանի Հանրապետությունից՝	**Բելառուսի Հանրապետությունից՝**	**Ղազախստանի Հանրապետությունից՝**	**Ղրղզստանի Հանրապետությունից՝**	**Ռուսաստանի Դաշնությունից՝**
Վ. Գաբրիելյան	**Վ. Մատյուշեւսկի**	**Բ. Սագինտաեւ**	**Օ. Պանկրատով**	**Ի. Շուվալով**